Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

1. Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ հրավիրող), որոնք 2026թ. մայիսի 15-ից մինչև հունիսի 5-ը ժամը 13:00-ն ներառյալ (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում MyAmeria հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ և պատվիրել Mastercard Standard տեսակի քարտ (այսուհետ նաև՝ Հաջողված ուղղորդում), հնարավորություն կստանան մասնակցելու Արշավին, որի շրջանակներում՝
   1.1 Հաջողված ուղղորդումների քանակը 5 և ավելի լինելու դեպքում Հրավիրողը կստանա 5000 ՀՀ դրամի չափով խրախուսման վճար (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառված չեն) յուրաքանչյուր հաջողված ուղղորդման համար Արշավի գործողության ժամկետի ավարտին՝ մինչև **2026 թվականի հունիսի 8-ը ներառյալ** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իր բանկային հաշվին:
   1.2 Արշավի մասնակցիները՝ Հրավիրողը և Հրավիրվողը՝ մասնակցում են **Kanye West-ի՝ հունիսի 12-ին Թբիլիսիում կայանալիք մենահամերգի փաթեթների խաղարկությանը** (այսուհետ նաև՝ Խաղարկություն): Խաղարկության համար նախատեսված պրոմո կոդերը ուղարկվում են մասնակիցների՝ Բանկին տրամադրած էլ. փոստի հասցեին արշավի ամփոփման ժամանակ: Ընդ որում, մեկից ավել հաջողված ուղղորդման դեպքում Ուղղորդողը ստանում է պրոմո կոդ յուրաքանչյուր հաջողված ուղղորդման մասով: Վիճակահանությունն ամփոփվելու է հունիսի 8-ին ուղիղ հեռարձակման միջոցով:[1]
2. Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.
   - Հրավիրողը պետք է հրավերն ուղարկած լինի առավելագույնը մինչև հունիսի 5-ը ժամը 13:00-ն,

[1] Վիճակահանության ուղիղ հեռարձակման հղումը մասնակիցները կստանան էլ. փոստի միջոցով

- Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի **Mastercard Standard** հեռավար եղանակով՝ հրավերի արդյունքում գրանցվելով SMS հաղորդագրությամբ ստացված հղմամբ,
- Հրավիրվողը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի **Mastercard Standard տեսակի քարտ 2026թ. թվականի մայիսի 15-ից մինչև 2026թ. հունիսի 5-ը ժամը 13:00-ն ներառյալ,**
- Խրախուսման վճարի ստացման համար հրավիրողը պետք է ունենա 5 և ավել հաջողված ուղղորդում,
- Արշավի ամփոփման պահին՝ **հունիսի 5-ի ժամը 14:00-ի դրությամբ**, հրավիրողը և հրավիրվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Հրավիրվողը չպետք է լինի **2025թ. հունիսի 1-ից** հետո փակված և արշավի շրջանակում վերաբացված հաճախորդ: